

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՈԿԵՐՆ ՈՒ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ:

ԱՐԴՅՈՒՔ ԿԴԻՄԱՆԱՆՔ ՑՆՑՈՒՄՆԵՐԻՆ

DOI: 10.52174/2579-2989_2022.2-31

Հիմնաբառեր. մակրոտնտեսական ազդեցություն, հարկաբյուջեդրային շրջանակ, հարկաբյուջեդրային կանոն, արտաքին շուկեր

Ռուս-ուկրաինական հակամարտությունը ոչ միայն տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում զգալի ցնցումներ և անորոշություններ է առաջացրել, որոնք պատճառ են դարձել վերանայելու տարեսկզբին առկա դրական կանխատեսումները: Այս գնահատականները թեև մինչև տարեվերջ դեռևս բազմակի կճշգրտվեն, սակայն, ըստ այս պահին առկա քանակական գնահատումների, կարող ենք որոշակի պատկերացում կազմել սպասվող տնտեսական զարգացումների մասին, ինչպես նաև հաշվարկների միջոցով որոշել, թե որքանով բացասական զարգացումները կազդեն Հայաստանի բյուջեդրային համակարգի վրա և ինչ խնդիրների կարող է բախվել հարկաբյուջեդրային քաղաքականությունը:

Հաշվի առնելով, որ ցնցումները զգալի սպառնալիք են նաև հարկաբյուջեդրային կայունության համար, հողվածում գնահատվել է ստացված արդյունքների համապատասխանությունը գործող հարկաբյուջեդրային կանոններին:

Ռուս-ուկրաինական հակամարտությունը համաշխարհային տնտեսության մեջ հանգեցրեց անկայունությունների սրման, արժույթային կտրուկ տատանումների, ֆինանսական և բանկային հատվածների խափանումների, էներգակիրների, պարենի գների պատմական հակառեկորդների արձանագրման¹ և համաշխարհային ու տարածաշրջանային լայնածավալ այլ



Մերի ՀՈՎԱՏՓՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2018 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ և ընդունվել մագիստրատուրա:

2018 թվականից առայսօր Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող փորձագետ է: 2020 թ. ընդունվել է ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2019 թ. փոխանակման ծրագրի շրջանակներում սովորել է Պոզնանի տնտեսագիտական համալսարանում՝ «Միջազգային բիզնես» մասնագիտությամբ:

 ORCID - <https://orcid.org/0000-0003-0299-8073>

¹ A. Kammer, J. Azour, A. Aemro Selassie, I. Goldfajn, C. RheeHow, “War in Ukraine Is Reverberating Across World’s Regions”, IMF, <https://blogs.imf.org/2022/03/15/how-war-in-ukraine-is-reverberating-across-worlds-regions/>

ցնցումների: Եթե մոտ մեկ ամիս առաջ միջազգային կառույցների կանխատեսումները համաշխարհային տնտեսական զարգացումների վերաբերյալ բացառապես դրական էին, և նախանշվում էր կորոնավիրուսային ճգնաժամի հետևանքների հաղթահարման ու տնտեսությունների վերականգնման գործընթաց, ապա այսօր արդեն խոսվում է գլոբալ համակարգերի փլուզման², տնտեսական աճի դանդաղման³ և համաշխարհային տնտեսական իրադրության խաթարման խորքային ռիսկերի մասին⁴:

Ռուս-ուկրաինական հակամարտության մեկնարկից ի վեր արևմտյան ավելի քան 300 խոշոր միջազգային կազմակերպություններ և վերազգային կորպորացիաներ հայտարարեցին ռուսաստանյան շուկան լքելու կամ առժամկետ գործունեության դադարեցման մասին⁵, որը հանգեցնելու է տասնյակ հազարավոր աշխատատեղերի կորստին, միլիոնավոր դուլարների ներդրումների սառեցմանն ու այլ շրջայական հետևանքների: Այս կազմակերպությունների մեջ կան այնպիսի խոշոր կորպորացիաներ, առանց որոնց կարող է խաթարվել ռուսական տնտեսության մի շարք ռազմավարական ուղղությունների բնականոն աշխատանքը՝ սկսած ավիացիայից, վերջացրած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտով: Սակայն, Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցները չեն սահմանափակվում միայն առևտրատնտեսական կապերի խզմամբ, դրանք վերաբերում են նաև ֆինանսաբանկային համակարգին, էլեկտրաէներգետիկ ոլորտին, ենթակառուցվածքային ներդրումներին և մի շարք այլ հարակից ուղղությունների⁶: Այլ կերպ ասած, պատ-

մության այս աննախադեպ պատժամիջոցների փաթեթով Արևմուտքը որոշել է փակել Ռուսաստանի «օդատար խողովակները»: ԱՄՀ ներկայացուցիչ Թանոս Արվանիտիսի հաղորդմամբ՝ ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների լայն շրջանակը, սննդամթերքի և վառելիքի ավելի բարձր գները, նվազ դրամական փոխանցումները, համաշխարհային ֆինանսական շուկայի տատանողականության աճն առաջիկա ամիսներին կընդլայնեն ընթացիկ հաշվի պակասուրդը, կհանգեցնեն գնաճի բարձրացմանը և կնվազեցնեն տնտեսական աճը: Հայաստանը ևս «անմասն» չի մնա այս զարգացումներից՝ հաշվի առնելով Ռուսաստանի հետ սերտ առևտրատնտեսական կապերը:

Հիմք ընդունելով տարածաշրջանի ընթացիկ զարգացումները, գնաճային ակնկալվող սպասումները և ռիսկի պրեմիումի բարձրացումը՝ օրերս իր կանխատեսումները վերանայեց նաև ՀՀ կենտրոնական բանկը⁷: Եթե մինչ այս, ԿԲ կանխատեսումների համաձայն, 2022 թ.-ին ՀՀ-ում նախանշվում էր 5.3% տնտեսական աճ, ապա այժմ այդ ցուցանիշը 1.6% է: Ընդ որում, այս կանխատեսումները դեռևս լիարժեքորեն չեն արտացոլում այն բոլոր անորոշությունները, որոնց հնարավոր է՝ բախվի ՀՀ տնտեսությունը պատժամիջոցների տևական երկարաձգման, ինչպես նաև դրանց նոր փաթեթների կիրառման հետևանքով: Ըստ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանի հնչեցրած գնահատականների՝ 2022 թ.-ին կանխատեսվում է 5.5% գնաճի մակարդակ՝ 1.5% շեղմամբ⁸: Գրեթե համանման գնահատականներ է հնչեցրել նաև ԱՄՀ-ն⁹, համաձայն որի՝ թեև Հայաստանի վրա

² The world food system may collapse. must prevent the storm of hunger. Secretary-General of the United Nations, <https://www.reporter.am/the-world-food-system-may-collapse-must-prevent-the-storm-of-hunger-secretary-general-of-the-united-nations/>
³ Global economic implications of the Russia-Ukraine war <https://www.eiu.com/n/global-economic-implications-of-the-russia-ukraine-war/>, Fitch снизило прогноз роста мирового ВВП в 2022 году на 0,7 п.п https://tass.ru/ekonomika/14137525?utm_source=banks.am&utm_medium=referral&utm_campaign=banks.am&utm_referrer=banks.am
⁴ Ukraine war is economic catastrophe, warns World Bank <https://www.bbc.com/news/business-60610537>
⁵ The Economist Access, Какие западные компании покидают Россию? <https://telegra.ph/Kakie-zapadnye-kompanii-pokidayut-Rossiyu-03-12>
⁶ IMF chief rules out global financial crisis in case of Russian default on debts, <https://www.arabnews.com/node/2041736/business-economy>
⁷ ԿԲ նախագահի անդրադարձը օրակարգային մի շարք կարևոր հարցերի և տնտեսական զարգացումներին, <https://economood.am/n/1552>
⁸ Տիգրան Խաչատրյանը 2022-ի համար կանխատեսում է 5.5 տոկոս գնաճ, <https://www.armenpress.am/arm/news/1078462/>
⁹ ԱՄՀ-ն Հայաստանում 2022-ի համար կանխատեսում է 1.5 տոկոս տնտեսական աճ, <https://www.armenpress.am/arm/news/1078159.html>

ազդեցության չափի մասով զգալի անորոշություն կա, նախնական գնահատականով տնտեսությունը 2022 թ.-ին կարող է աճել շուրջ 1,5%-ով:


Այս գնահատականները թեև հսկայական անորոշություններ են պարունակում և մինչև տարեվերջ դեռևս բազմակի կճշգրտվեն, սակայն այս պահին ներկայացվող քանակական գնահատումները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու սպասվող տնտեսական զարգացումների մասին և հաշվարկների միջոցով փորձ անելու գնահատել, թե որքանով այս բացասական զարգացումները կազդեն բյուջետային համակարգի վրա և ինչ խնդիրների կարող է բախվել հարկաբյուջետային քաղաքականությունը:

Համաձայն «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ուղերձ-բացատրագրում տեղ գտած¹⁰ մակրոտնտեսական շրջանակի՝ 2022 թ.-ին պետական բյուջեի կազմման հիմքում եղել է 7.0% տնտեսական աճի սցենարը, որի պարագայում անվանական ՀՆԱ-ն պետք է կազմեր 7,869.4 մլրդ դրամ: Ըստ կանխատեսումների՝ ՀՆԱ դեֆլյատորը նախանշվում էր 4.6%-ի շրջանակներում, իսկ 12-ամսյա գնաճը կկազմեր 5.6%: Այս զարգացումները հնարավորություն կտային ապահովելու 1,947.8 մլրդ

դրամ եկամուտ պետական բյուջեում, իսկ ծախսերի պլանավորված՝ 2,184.0 մլրդ դրամ մակարդակի դեպքում պետական բյուջեի պակասուրդը կկազմեր 236.3 մլրդ դրամ: Արդյունքում, պետական պարտքը 2022 թ.-ի տարեվերջի դրությամբ կլիներ 4,740.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ 60.2%-ը: Միաժամանակ, 2022 թ.-ին կառավարությունն ակնկալում էր լրացուցիչ վարչարարությամբ ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության մոտ 0.9 տոկոսային կետով բարելավում:

Հիմք ընդունելով ԿԲ և ՖՆ վերանայված գնահատականները՝ փորձենք վերահաշվարկել մակրոտնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշները, մասնավորապես՝ գնահատել, թե 1.6% տնտեսական աճի, 5.5% գնաճի և պետական բյուջեի ծախսերի մակարդակի պահպանման պայմաններում որքան կկազմեն պետական բյուջեի հարկային եկամուտները, պակասուրդը, և թե տարեվերջին որքան կլինեն կառավարության պարտքի ցուցանիշն ու դրա կշիռը ՀՆԱ-ում:


Հիմք ընդունելով վերանայված կանխատեսումները՝ հնարավոր է եղել գնահատել ՀՆԱ դեֆլյատորը՝ 5.8%, որի կիրառմամբ և տնտեսական աճի վերանայված կանխատեսմամբ հաշվարկվել է անվանական ՀՆԱ մակարդակը: Այսպիսով՝



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տնտեսության իրական հատվածի զարգացումների քանակական գնահատումները¹¹

¹⁰ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2022t_nakhagits_
¹¹ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2022t_nakhagits_ և հեղինակի գնահատումներ



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2




Հարկաբյուջետային հատվածի կանխատեսումները և վերանայված գնահատականները

պետական բյուջեի հիմքում դրված 7 869,4 մլրդ դրամի փոխարեն՝ վերջինս կկազմի 7 496,1 մլրդ դրամ: Արդյունքում, անվանական ՀՆԱ-ն 2022 թ.-ին մոտ 375 մլրդ-ով ավելի պակաս կլինի, քան դրված էր բյուջեի կազմման հիմքում:

Ինչ վերաբերում է հարկաբյուջետային հատվածի զարգացումներին, ապա դրա գնահատման ժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ այս պահին դեռևս հարկաբյուջետային վերանայումներ նախատեսված չեն, և չի քննարկվում պետական բյուջեի ծախսերի կրճատման

հարցը: Միաժամանակ, հաշվի առնելով առաջացած ռիսկերը և բացասական զարգացումները, պետական բյուջեով նշված վարչարարության բարելավմամբ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավում ևս գործնականում ղժվար կլինի իրականացնել, հետևաբար՝ գնահատումներ կատարելիս պետական բյուջեի ծախսերը թողնվել են անփոփոխ, իսկ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի համար կիրառվել է 2021 թ.-ի փաստացի արձանագրված արդյունքը: Անփոփոխ են թողնվել նաև պետական բյուջեի ոչ հարկային եկամուտների ծավալները (գծա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3



Կառավարության պարտքի մակարդակի կանխատեսումները և վերանայված գնահատականները¹²

¹² ՀՀ հարկաբյուջետային կանոնների ներկա համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ:

պատկեր 3):

Ելնելով վերոգրյալ պայմաններից և հիմք ընդունելով իրականացված գնահատումները՝ 2022 թ.-ի պետական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները կկազմեն 1 790 519,8 դրամ, այսինքն՝ մոտ 157 մլրդ-ով պակաս բյուջեի կանխատեսումից: Այս սցենարի դեպքում ակնկալվում է, որ պետական բյուջեի պակասուրդը կկազմի 393 480,2 մլրդ դրամ, ինչը համապատասխան նախնական ցուցանիշից շեղվում է մոտ 130 մլրդ-ով:

Ըստ իրականացրած գնահատումների՝ պետական պարտքը բյուջեի նախնական տվյալների համեմատ կավելանա ավելի քան 390 մլրդ-ով, իսկ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 68.5%՝ պլանավորված 60.2%-ի փոխարեն: Այս պարագայում 2022 թ.-ի տարեվերջին պետական բյուջեի պակասուրդը կկազմի ՀՆԱ 5,2%-ը:

Հաշվի առնելով ստացված գնահատականները, ինչպես նաև արտաքին աշխարհից եկող սպառնալիքները՝ առաջիկայում ևս կարող են ի հայտ գալ էական մակրոտնտեսական ռիսկեր: Մասնավորապես՝ ինչպես 2020 թ.-ին (համավարակի և պատերազմի հետևանքով), այնպես էլ այս տարի հարկաբյուջետային ցուցանիշները կարող են շեղվել քաղաքականության մշակման հիմքում դրված հարկաբյուջետային կանոններից: Հարկաբյուջետային և պարտքային կայուն միջավայր ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ 2021 թ.-ին մեկնարկել էր հարկաբյուջետային համախմբումը (կոնսոլիդացիան): Հաշվի առնելով նախորդ տարվա բացասական իրադարձությունների հետևանքները՝ ևս մեկ տարի օգտագործվել են հարկաբյուջետային կանոնների համակարգով նախատեսված բացառիկ դեպքի կարգավորումները¹³, իսկ պետական ֆինանսների «ոսկե կանոնների» տրամաբանությանը և հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը ակնկալվում էր վերադարձ կատարել 2022 թ.-ին, սակայն, ինչպես ցույց տվեցին գնահատումները, չի բացառվում որ 2022 թ.-ը ևս կլինի հարկաբյուջետա-

յին կանոններից շեղման տարի, իսկ կառավարության պարտքի մակարդակն ընդհուպ կմոտենա կանոններով սահմանված վերին շեմին:

Կարևոր է ընդգծել, որ ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնադին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմականի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով: Հետևաբար՝ չի բացառվում, որ 2022 թ.-ին ստեղծված իրավիճակը նույնպես կարող է համարվել բացառիկ՝ տնտեսական ցնցման հետ կապված բացասական տնտեսական զարգացումների համատեքստում, և որ գործի կորվի հերթական հարկաբյուջետային համախմբումը (կոնսոլիդացիան), որը կստիպի հաջորդող տարիներին սահմանափակել ընթացիկ ծախսերի հավելածը, ինչպես նաև առավել զգուշավոր մոտեցում ցուցաբերել ծախսերի պլանավորմանը, իսկ այս երկու գործոններն էլ, իրենց հերթին, կնպաստեն տնտեսական աճի դանդաղմանը:

Ամփոփելով նշենք, որ դիտարկումները հիմնված են այս պահին տարբեր գերատեսչությունների հրապարակած նախնական գնահատականների վրա և կարող են փոխվել՝ կախված հնարավոր զարգացումներից: Այնուհանդերձ, դրանք, թերևս, միակ պաշտոնական քանակական գնահատականներն են, որոնք արտացոլում են սպասվող տնտեսական զարգացումները: Ընդ որում, եթե ԿԲ կանխատեսումներն իրականանան, ապա ստեղծված իրավիճակը լուրջ ռիսկեր կարող է առաջացնել, և կառավարությունը մեծ ջանք պետք է գործադրի սպառնալիքները հաղթահարելու և տնտեսական ցնցումներին դիմագրավելու ուղղությամբ:

Նկատենք, որ ՌԴ տնտեսական զարգացման նախարարության նախնական գնահատականներով, կիրառվող պատժամիջոցների համապատկերում, 2022 թ.-ին կանխատեսվում է Ռուսաստանի ՀՆԱ ան-

¹³ Առավել մանրամասն տե՛ս բյուջետային ուղերձի «2.5. Հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին» հատվածում:

կում՝ 8.8%-ով, իսկ 2023 թ.-ին՝ աճ՝ 1.3%-ով:¹⁴ Տարբեր կարծիքներ են հնչում, որ Ռուսաստանից կպահանջվի 10 տարի՝ վերադարձնելու տնտեսությունը 2021 թ.-ի մակարդակին: Նման կանխատեսումների համար հիմք է ընդունվում ՌԴ տնտեսական անկման «միջին» սցենարը՝ 6% տնտեսական անկման հավանականությամբ: Սակայն, նշենք, որ 2022 թ.-ի առաջին եռամսյակում Հայաստանում արձանագրվել են տնտեսական ակտիվության՝ սպասվածի համեմատ ավելի դրական զարգացումներ, որոնց հիմնականում նպաստել է նաև միջազգային այցելուների զգալի ներհոսքը: Մասնավորապես՝ միայն 2022 թ.-ի առաջին եռամսյակում Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 250 հազար 798 մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե երեք անգամ ավելի է, մինչդեռ 2019 թ.-ի

նույն ժամանակահատվածի համեմատ՝ 13.2%-ով պակաս: Դրանից զատ, 2022 թ.-ի հունվար-ապրիլին հարկային եկամուտների և պետական տուրքի գծով փաստացի մուտքերը գերակատարվել են¹⁵, ինչը նույնպես լրացուցիչ հանգամանք կարող է լինել վերոնշյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումային սցենարը մեղմելու համար: Այնուամենայնիվ, մատնանշված կանխատեսումները դեռևս կփոփոխվեն՝ պայմանավորված ներկայիս անորոշություններով, և քաղաքականություն մշակողների առջև խնդիր կդրվի՝ իրականացնելու տնտեսության դիմադրողականության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ ստեղծված իրավիճակից հնարավորինս քիչ կորուստներով տնտեսությունը դուրս բերելու նպատակով:

¹⁴ Правительство обсудило параметры обновленного макропрогноза, <https://www.vedomosti.ru/economics/articles/2022/04/27/919912-parametri-obnovlennogo-makroprognoza>
¹⁵ ՀՀ պետական եկամուտների կոմիտե, «2022 թ. առաջին եռամսյակում հարկային եկամուտների հավաքագրումը գերակատարվել է 5.2 մլրդ դրամով կամ 1.3%-ով», <https://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=ts&nid=8935>, «2022 թ. ապրիլ ամսվա հարկային եկամուտները գերակատարվել են 31 մլրդ դրամով», <https://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=src&nid=9029>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄՀ-ն Հայաստանում 2022-ի համար կանխատեսում է 1.5 տոկոս տնտեսական աճ, <https://www.armenpress.am/arm/news/1078159.html>
2. ԿԲ նախագահի անդրադարձը օրակարգային մի շարք կարևոր հարցերին և տնտեսական զարգացումներին, <https://economood.am/n/1552>
3. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2022t_nakhagits_
4. Տիգրան Խաչատրյանը 2022-ի համար կանխատեսում է 5.5 տոկոս գնաճ, <https://www.armenpress.am/arm/news/1078462/>
5. A. Kammer, J. Azour, A. Aemro Selassie, I. Goldfajn, C. RheeHow, “War in Ukraine Is Reverberating Across World’s Regions”, IMF, <https://blogs.imf.org/2022/03/15/how-war-in-ukraine-is-reverberating-across-worlds-regions/>
6. The world food system may collapse. must prevent the storm of hunger. Secretary-General of the United Nations, <https://www.reporter.am/the-world-food-system-may-collapse-must-prevent-the-storm-of-hunger-secretary-general-of-the-united-nations/>
7. Global economic implications of the Russia-Ukraine war <https://www.eiu.com/n/global-economic-implications-of-the-russia-ukraine-war/>, Fitch снило прогноз роста мирового ВВП в 2022 году на 0,7п.п, https://tass.ru/ekonomika/14137525?utm_source=banks.am&utm_medium=referral&utm_campaign=banks.am&utm_referrer=banks.am
8. Ukraine war is economic catastrophe, warns World Bank <https://www.bbc.com/news/business-60610537>
9. The Economist Access, Какие западные компании покидают Россию? <https://telegra.ph/Kakie-zapadnye-kompanii-pokidayut-Rossiyu-03-12>
10. Russian default on debts no longer ‘improbable’, says IMF head, <https://www.theguardian.com/world/2022/mar/13/russian-default-on-debts-no-longer-improbable-says-imf-head>

Мери ОВСЕПЯН*Аспирант кафедры международных экономических отношений, АГЭУ***ЭКОНОМИЧЕСКИЕ ШОКИ И ФИСКАЛЬНАЯ ОСНОВА. ВЫЖИВЕМ ЛИ МЫ ЭТОТ ШОК?**

Российско-украинский конфликт вызвал значительные потрясения и неопределенности не только в регионе, но и во всем мире, что привело к пересмотру позитивных прогнозов. Хотя эти оценки содержат огромные неопределенности и к концу года они будут неоднократно уточняться, количественные оценки, представленные в настоящее время, дают некоторое представление об ожидаемом экономическом развитии и дают возможность расчетным путем оценить, в какой степени эти негативные явления повлияют на бюджетную систему Армении и с какими проблемами может столкнуться фискальная политика. Учитывая, что эти шоки также представляли существенную угрозу фискальной стабильности, была проведена оценка соответствия результатов действующим бюджетным правилам.

Ключевые слова: *макроэкономическое воздействие, фискальная основа, бюджетное правило, внешние шоки*

Meri HOVSEPYAN*PhD student of the Chair of International Economic Relations, ASUE***ECONOMIC SHOCKS AND FISCAL FRAMEWORK. WILL WE SURVIVE THIS SHOCK?**

The Russian-Ukrainian conflict has caused significant upheavals and uncertainties not only in the region, but also around the world, which has led to a revision of positive forecasts. Although these estimates contain huge uncertainties and will be adjusted many times by the end of the year, the quantitative estimates presented at this time provide some insights into the expected economic developments and make it possible to estimate by calculation the extent to which these negative phenomena will affect the budget system of Armenia, and what problems the fiscal policy may face?

Taking into account the fact that these shocks also posed significant threats to fiscal stability, the compliance of the obtained results with the current fiscal rules was assessed.

Keywords: *macroeconomic impact, fiscal framework, fiscal rule, external shocks*